

Հաշվետվություն

Կրթության որակի ապահովման և գնահատման բաժնի կողմից 2013թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին մասնաճյուղում իրականացված բաց դասերի ամփոփման վերաբերյալ

Մասնաճյուղում իրականացված բաց դասերի շարքը նպատակ ուներ ուսումնասիրել մասնաճյուղի դասախոսների կողմից կիրառվող դասավանդման մեթոդները, վերլուծել դասընթացների վարման բովանդակային և տեխնիկական վիճակը:

Բաժնի մասնագետների կողմից մշակվել էին դասընթացի վարման գնահատման հետևյալ չափանիշները.

1. *Դասի վարման մեթոդիկան.*

- Դասի արդյունավետ պլանավորում՝ դասընթացի թեմայի, նրա կառուցվածքի, տրամաբանության հստակ ներկայացում,
- Դասի նպատակների, խնդիրների և ակնկալիքների վերահանում,
- Գիտելիքների մատուցման գիտական պատշաճ մակարդակի ապահովում՝ մասնագիտական համապատասխան տերմինների, գաղափարների, հիմնական հասկացությունների ներկայացման միջոցով,
- Նյութի մատչելի մատուցում,
- Խոսքի արտահայտչականության, շփման մեջ մտնելու ունակության առկայություն,
- Ժամանակի և ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
- Հիմնական եզրակացություններով դասի ամփոփում:

2. *Ամրապնդման հնարների կիրառում.*

- Ժամանակակից տեխնիկական միջոցների, դիդակտիկ և բաշխիչ նյութերի օգտագործում,
- Դասընթացի ժամանակ հարցերի և խնդիրների առաջադրում,
- Կատակային և բանախոսական Տարբեր հնարների կիրառում,
- Ուսանողներին դասապրոցեսին անընդհատ ներգրավում՝ անհատական և խմբային հարցերի միջոցով:

3. *Ուսանողների մասնակցության ղեկավարում.*

- Ուսանողների ուղղորդում՝ խնդրահարույց հարցեր ձևակերպելու, մատուցելու, լուծելու գործում,
- Հարցադրումների միջոցով ուսանողների մեջ փաստերը վերլուծելու, դրանց քննադատաբար վերաբերվելու ունակությունների ձևավորում,
- Լսարանի արձագանքին հետևելու կարողություն:

4. *Կարգապահության պահպանման հնարների կիրառում.*

- Լսարանում կարգապահության ապահովում:

Նշենք, որ մասնաճյուղի դասախոսների մոտ ձևավորված է դասընթացի արդյունավետ պլանավորման, ուսանողների հետ սերտ աշխատելու, տեխնիկական միջոցներով և բաշխիչ նյութերով աշխատելու մշակույթ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բաց դասերն անց էին կացվում նախապես հաստատված գրաֆիկով, գրեթե բոլոր դասախոսները յուրահատուկ ձևով էին նախապատրաստվել դասին, կիրառելով դասավանդման տարբեր մեթոդներ: Ցանկալի կլինի որ մեր դասախոսները, հնարավորության դեպքում, այդ մեթոդները կիրառեն բոլոր դասերի

Ժամանակ: Մենք նկատեցինք, որ բոլոր այն դասախոսները, որոնք լավ տիրապետում էին դասի արդյունավետ վարման ժամանակակից մեթոդներին, ինչ որ ձևով անցել էին մեթոդական վերապատրաստումներ:

Վերլուծության արդյունքների հիման վրա նեկայացնում ենք դասավանդման և ուսումնառության գործընթացի մեր կողմից նկատված դրական կողմերը.

- դասախոսություններն ապահովում էին անհրաժեշտ գիտական մակարդակ, ընդգրկում էին վերլուծական, քննադական և համեմատական տարրեր, անհրաժեշտ դեպքերում հազեցած փաստերով,
- դասապրոցեսներն անցնում էին պլանով՝ պահպանելով թեմայի կառուցվածքը, ներկայացվում էին դասի նպատակները, խնդիրները և ակնկալիքները,
- դասախոսներն ունեին խոսքի մշակույթ, ինքնավստահ էին,
- դասախոսները տրամադրում էին բաշխիչ նյութեր, դասախոսությունների սղագրեր, անհրաժեշտ գրականության ցանկ, հետևողական էին ուսանողների գրառումներին,
- կարողանում էին լսարանի ուշադրությունը պահել մինչև դասի վերջը, ստեղծել քննարկումների համար անկաշկանդ մթնոլորտ, ուղղորդում էին ուսանողներին՝ եզրահանգումներին հասնել ինքնուրույն,
- կիրառում էին ուսանողների հետ հետադարձ կապի մեխանիզմներ, մասնավորապես էլեկտրոնային տարբերակը:

Նշենք, որ մեր երիտասարդ դասախոսները չէին զիջում դասի արդյունավետ վարման իրենց հմտություններով և կիրառում էին դասավանդման ժամանակակից մեթոդներ:

Մասնավոր դեպքերում նկատվել են նաև ուսումնառության արդյունավետությանը խոչընդոտող թերություններ.

- վարում էին ավանդական դասախոսություն (գործնական, սեմինար և լաբորատոր դասընթացներ)՝ չօգտագործելով ժամանակակից մեթոդներ (օրինակ, տեխնիկական միջոցներ), որոշ դեպքերում նյութը թելադրվում էր,
- գործնական, սեմինար և լաբորատոր դասընթացներին ոչ բոլոր ուսանողներն էին ներգրավվում դասապրոցեսին, քիչ էին երկխոսությամբ անցկացվող դասապրոցեսները, որը խոսում էր ուսանողների անտարբերության և պասիվության մասին, հետևաբար դժվար էր գնահատել ուսանողների բավարարվածությունը տվյալ դասապրոցեսից, ստացած գիտելիքներից,
- ուշադրություն չէր դարձվում միջառարկայական կապերին,
- ուսանողների մոտ թույլ էր ինքնուրույն, կազմակերպված խոսքի մակարդակը,
- լսարանում կարգապահությունը երբեմն չէր գտնվում պատշաճ մակարդակի վրա,
- թույլ համագործակցությունը միևնույն առարկայի դասախոսություն և գործնական դասավանդող դասախոսների միջև,
- դասապրոցեսի ժամանակ քիչ էին կիրառվում ուսանողների ճանաչողական գործունեության ակտիվացման, պրոբլեմների առաջադրմամբ կոնկրետ իրավիճակների անալիզի, բանավեճային կամ երկխոսական, խաղային և մրցակցային, դիտավորյալ ներկայացված սխալների վրա աշխատելու մեխանիզմներ:

Նշենք, որ բաց դասերին գործընկերների և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությունը քիչ էր:

Տեխնիկական առումով կարելի է նշել, որ որոշ լսարաններ կահավորված չէին, համահունչ չէին տվյալ մասնագիտության և դասընթացի ոգուն և պահանջներին:

Անվիճելի է, որ բաց դասերի անցկացման այս գործընթացը մի առաջընթաց քայլ է և նպատակ ունի բարձրացնել դասավանդման և կրթական ծառայությունների մատուցման որակը և արդյունավետությունը, ամրապնդել մասնաճյուղի նվաճումները: Այն առաջադրում է բավականին խնդիրներ.

1. դասավանդման որակից ուսանողների բավարարվածության մակարդակի որոշում,
2. ուսումնառության ընթացքում հետադարձ կապի ապահովում ուսանողների հետ,
3. մասնագետների պատրաստվածության որակից գործատուների բավարարվածության մակարդակի որոշում,
4. իրենց աշխատանքի բովանդակությունից և արդյունքից դասախոսների բավարարվածության մակարդակի բացահայտում,
5. առկա խնդիրների մեջ կողմնորոշվելու և լուծումներ տալու համար ինֆորմացիոն բազայի ստեղծում:

ԿՈԱԳ բաժինը ամփոփելով բաց դասերի արդյունքներն առաջարկում է.

- դասախոսների համար մշակել դասի վարման օրինակելի սխեմա,
- մշակել բաց դասերի անց կացման կանոնակարգ,
- ավելացնել մասնաճյուղում լսարանների տեխնիկական հագեցվածությունը (մասնավորապես՝ նոր պրոյեկտորներով, ունենալ լինգաֆոնային լսարան),
- կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ ժամանակակից մեթոդներով դասավանդման ձևերի ուսուցման նպատակով,
- օգտագործելով մասնաճյուղի ներուժը կազմակերպել տեխնիկական հնարավորություններով, բաշխիչ նյութերով, խմբերով աշխատելու ունակություններ ձեռք բերելու դասընթացներ,
- դասախոսներին ուղղորդել ձևավորելու առարկայական case-փաթեթներ,
- ամբիոնների ուշադրությունը հրավիրել դասընթացների ծրագրերում մասնագիտության կրթական վերջնարդյունքի ձևավորման գործընթացում տվյալ դասընթացի հիմնավորվածությանը, նրա արդիականությանը, միջառարկայական կապերին և պրակտիկ կիրառությանը,
- մշակել հարցաշարեր դասախոսի և ուսանողի համար՝ բաց դասի արդյունավետությունը գնահատելու նպատակով:

Ներկայացված առաջարկները նպատակ ունեն դասախոսների նպատակային գործունեության միջոցով յուրաքանչյուր դասի, թեմայի, դասընթացի շրջանակներում ուսանողի մոտ ստեղծել շահագրգռվածություն դասընթացին հաճախելու նկատմամբ, վստահություն մասնագիտության պահանջվածության և իր կրթական վերնարդյունքների ձևավորման գործում դասընթացի կարևորության ու դերի նկատմամբ:

Ցանկանում ենք, որ Ուիլյամ Արթուր Ուորդի հետևյալ քառատողը մեր դասախոսների համար դառնա կարգախոս.

Միջակ դասավանդողն ասում է:

Լավ դասավանդողը բացատրում է:

Գերազանց դասավանդողը ցուցադրում է:

Բացառիկ դասավանդողը ՈԳԵՇՆՉՈՒՄ է:

Նաև դասավանդման ժամանակակից մեթոդների արտահայտչականության առավելությունները հիմնավորել չինական հին ասույթով.

“Ասա ինձ, և ես կմոռանամ, ցույց տուր ինձ, և ես կհիշեմ, տուր կատարեմ, և ես կհասկանամ”:

Այս բառերում ամփոփված է ակտիվ ուսուցման ողջ էությունը:

Կրթության որակի ապահովման և զնահատման բաժին